ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՇԻՐԻՆՅԱՆ ՄՀԵՐ ԱՐՄՈՅԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ШИРИНЯН МГЕР АРМОЕВИЧ

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ СОТРУДНИЧЕСТВА В ОБЛАСТИ КОЛЛЕКТИВНОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В НАСТОЯЩЕЕ ВРЕМЯ

Диссертация на соискание научной степени кандидата политических наук по специальности 23.00.02 “Политические институты и процессы”

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН - 2026

Ատենախոսության թեման հաստատվել է **ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում:**

Գիտական ղեկավար՝
քաղաքական գիտ. դոկտոր **Քոչարյան Տիգրան Տոնիկի**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
քաղաքական գիտ. դոկտոր **Դավթյան Վահե Սամվելի**
քաղաքական գիտ. թեկնածու **Գրիգորյան Նարեկ Հրանտի**

առաջատար կազմակերպություն՝
Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի մայիսի 7-ին՝ ժամը 16:00-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդում:
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2026 թվականի մարտի 30-ին:

ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի 056 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, քաղաքական
գիտությունների թեկնածու, դոցենտ **Սարգսյան Առնակ Գեորգիի**

Тема диссертации утверждена в **Институте философии, социологии и права Национальной Академии Наук Республики Армения.**

Научный руководитель:
доктор политических наук, профессор **Кочарян Тигран Тоникович**

Официальные оппоненты:
доктор политических наук **Давтян Ваге Самвелович**
кандидат политических наук **Григорян Нарек Грантович**

Ведущая организация: **Государственный университет им. В.Брюсова**

Защита состоится 7-ого мая 2026 г. в 16:00 часов на действующем в ЕГУ специализированном совете 056 "Политология и международные отношения" МОНКС КВОН РА. Адрес: РА, г. Ереван, 0025, Ал. Манукяна, 1.
С диссертацией можно ознакомиться в библиотеке имени Саркиса и Мари Измирлянов ЕГУ.
Автореферат разослан 30-ого марта 2026 г.

Научный секретарь
специализированного совета 056 МОНКС КВОН РА,
кандидат политических наук, доцент **Саргсян Арнак Георгиевич**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից աշխարհում անվտանգության ապահովումը դարձել է պետությունների համար առաջնահերթ խնդիր, քանի որ միջազգային հարաբերությունների համակարգը բնութագրվում է աճող անկայունությամբ և բարդությամբ: Միջազգային ազդեցիկ փոփոխություններն ու տարածաշրջանային հակամարտությունները շատ դեպքերում վերածվում են գլոբալ սպառնալիքների, ինչից ելնելով էլ պետությունները ստիպված են գործել՝ ոչ միայն անհատական, այլև դաշինքային ու հավաքական ձևաչափերով՝ արդյունավետ դիմագրավելու բազմաշերտ մարտահրավերներին:

Աշխարհաքաղաքական անկայունության հետևանքով նվազում է պետությունների միջև փոխվստահությունը, աճում է անկանխատեսելիությունը և անորոշությունը, ավելանում է ուժի և ուժի կիրառման սպառնալիքի վտանգը, խորանում է զինաթափման և սպառազինությունների վերահսկման միջազգային ռեժիմների թուլացումը, վերանայվում են անվտանգային համակարգերի ու պետությունների միջև համագործակցության հիմքերը:

Միջազգային անվտանգային միջավայրի փոփոխություններն իրենց ազդեցությունն են թողնում նաև հարավկովկասյան տարածաշրջանի վրա, որը ոչ միայն կրում է տեղի ունեցող աշխարհաքաղաքական, ռազմաքաղաքական աշխարհատնտեսական և այլ գլոբալ գործընթացների ու փոփոխությունների ազդեցությունը, այլև վերածվում է ուժային կենտրոնների շահերի մրցակցության ասպարեզի:

Նման պայմաններում անվտանգության հավաքական ձևաչափերը կարևոր դեր են խաղում հատկապես այն երկրների համար, որոնք չունեն ամբողջական ռեսուրսներ կամ փորձ՝ անկախորեն դիմակայելու ժամանակակից սպառնալիքներին: Հենց այս իրավիճակում հավաքական ջանքերն ու միջազգային համագործակցությունը դառնում են անվտանգության ապահովման հուսալի միջոց: Սա հատկապես արդիական է այն պետությունների համար, որոնք բախվում են կարճաժամկետ փորձությունների և մշտական սպառնալիքների: Այս երկրները, օգտագործելով իրենց սահմանափակ ռեսուրսները, ձգտում են հավաքական համակարգերում ակտիվ ներգրավվածության միջոցով ապահովել ոչ միայն ազգային անվտանգությունն ու կայունությունը, այլև իրենց դիրքերի ամրապնդումը միջազգային ասպարեզում:

Հետևապես՝ հավաքական անվտանգությունը բնութագրվում է որպես մի համակարգ, որով պետությունները փորձում են կանխել կամ դադարեցնել պատերազմը: Հավաքական անվտանգության պարագայում ցանկացած պետության դեմ ագրեսորը համարվում է ագրեսոր բոլոր մյուս

պետությունների դեմ, որոնք միասին գործում են ագրեսորին հետ մղելու համար: Արևմտյան և ռուսաստանյան իրավաքաղաքական մշակույթների ներկայացուցիչները հավաքական (շատ աղբյուրներում համարժեքորեն օգտագործվում է նաև կոլեկտիվ տերմինը) անվտանգության նկատմամբ ունեն փոքր-ինչ տարբեր մոտեցումներ: Այսպես. ռուսական աղբյուրներում կոլեկտիվ անվտանգությունը սահմանվում է որպես «միջպետական կազմակերպությունների, միջազգային պայմանագրերի ու համաձայնագրերի, կոլեկտիվ մարմինների և ուժերի համախումբ, որը մի քանի պետություններ կամ ամբողջ համաշխարհային ընկերակցությունը տարածաշրջանային կամ համընդհանուր մակարդակում ստեղծում են մարդկային քաղաքակրթության դեմ ուղղված տարաբնույթ (տնտեսական, ռազմական, բնապահպանական և այլ) սպառնալիքները կանխելու կամ չեզոքացնելու նպատակով»[1]: Ըստ արևմտյան մոտեցման՝ դա մի համակարգ է, «որի միջոցով պետությունները փորձում են կանխել կամ դադարեցնել պատերազմը: Համաձայն հավաքական անվտանգության վերաբերյալ պայմանավորվածության՝ որևէ պետության դեմ ագրեսորը դիտվում է որպես ագրեսոր մյուս բոլոր պետությունների դեմ, որոնք ձեռնարկում են ագրեսորի գործողությունների համատեղ հետմղում կամ զսպում»[2]:

Հավաքական անվտանգության հայեցակարգը, թեև տեսականորեն հզոր և իդեալական է, սակայն գործնականում հաճախ չի երաշխավորում ամբողջական արդյունավետություն: Այն չի կարողացել լիովին արձագանքել ժամանակակից անվտանգային այնպիսի մարտահրավերներին, ինչպիսիք են՝ հիբրիդային պատերազմները, կիբեռանվտանգության խնդիրները և տարածաշրջանային անկայունությունը: Այս խնդիրների լուծման համար անհրաժեշտ է վերանայել և արդիականացնել հավաքական պաշտպանության ու համապարփակ դիմակայության համակարգերի հիմնական գործիքարանը՝ առավել ճկուն և գործնականում արդարացնող մոտեցումներ մշակելու նպատակով:

Ինչպես ցույց է տալիս պատմությունը, հավաքական անվտանգության հաջողությունը մեծապես կախված է անդամ պետությունների

---

[1] Տե՛ս **Свеклова-Богданова Е.**, Системы коллективной безопасности: региональные, в рамках СНГ, 24 июля 2025, https://zaochnik.com/spravochnik/pravo/mezhdunarodnoe-pravo/sistemy-kollektivnoj-bezopasnosti/, դիտում՝ 28.08.2025

[2] Տե՛ս Politics, Law & Government, International relations, Collective security, https://www.britannica.com/topic/collective-security, դիտում՝ 28.08.2025

միասնականությունից և պատրաստակամությունից: Պետությունների մեծ մասը հաճախ առաջնահերթ համարում է սեփական շահերը, ինչը խոչընդոտում է համատեղ գործողությունների արդյունավետությունը: Բացի այդ, քննադատություններում նշվում է նաև, որ հավաքական անվտանգության ու պաշտպանության համակարգը կարող է նպաստել լարվածությունների սրմանը՝ փոքր հակամարտությունները վերածելով մեծ պատերազմների: Համակարգը հաճախ գերադասում է ռազմական լուծումները, որոնք ոչ միայն ծախսատար են, այլև՝ ոչ կայուն:

Այս ամենով հանդերձ, հավաքական անվտանգության հայեցակարգը կարևոր և անհրաժեշտ դեր է խաղում գլոբալ ու տարածաշրջանային խաղաղության պահպանման, ինչպես նաև ազգային անվտանգության երաշխավորման գործընթացներում: Հայաստանի Հանրապետությունում լայնածավալ անվտանգային բարեփոխումները և արդիականացումը, համապարփակ դիմակայության զարգացող հնարավորությունները կարող են նորովի վերափոխել համակարգը, որը հաճախ գաղափարապես ուժեղ, բայց գործնականում անկատար կամ ոչ լիարժեք է եղել: Միջազգային համագործակցության նոր ձևաչափերի և այլ պետությունների հետ հավաքական անվտանգության ձևաչափերում ավելի ակտիվ ներգրավվածության միջոցով հնարավոր է հիմք դնել ՀՀ ազգային կայուն անվտանգության համակարգի համար՝ նպաստելով խաղաղության հաստատմանը տարածաշրջանային մակարդակում:

ՀՀ արտաքին քաղաքականության համատեքստում հավաքական անվտանգության ու պաշտպանության հիմնախնդիրների ամբողջական և գիտական վերլուծության անհրաժեշտությունը պայմանավորել է թեկնածուական ատենախոսության թեմայի ընտրությունն ու արդիականությունը:

Ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը:

Հայաստանի Հանրապետության շուրջ աշխարհաքաղաքական իրողությունները և տարածաշրջանային գործակցության արդի հրամայականը պահանջում է ազգային անվտանգության ու դրա երաշխավորման քաղաքականության հիմնախնդիրների ամբողջական ու հետևողական վերլուծություն: Պետության գործունեության մեջ իր հատուկ կարևորությամբ առանձնանում է անվտանգային ուղղությունը, ինչն էլ իր հերթին արդիական է դարձնում այդ ոլորտի հետազոտական և գիտավերլուծական աշխատանքների իրականացումը:

ԽՍՀՄ տարիներին հավաքական անվտանգությունը բավարար չափով չի ներառվել արտաքին ու ռազմական քաղաքականությունների ռազմավարական հիմունքներում: Չկային աշխատություններ, որոնք համակարգված տարբերակով բացահայտեին հավաքական անվտանգության և պաշտպանության էությունն ու բովանդակությունը:

2020 թվականի 44-օրյա արցախյան պատերազմից հետո, 2021-2022թթ., 2023թ. զարգացումներով, 2025թ. օգոստոսի 8-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի և Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի կողմից համատեղ հռչակված «Միջազգային խաղաղության և բարգավաճման համար Թրամփի երթուղի» (TRIPP) նախագծով ստեղծված նոր տարածաշրջանային պայմաններում Հարավային Կովկասում դրսևորվում են ուժերի նոր հարաբերակցության, նոր դաշինքների ու համագործակցության մեխանիզմների մշակման ու գործարկման, ինչպես նաև տարածաշրջանային և արտատարածաշրջանային հիմնական ուժային կենտրոնների դերակատարության էական փոփոխման զարգացումներ: Նկատի ունենալով ռազմավարական վերափոխումների պայմաններում հարավկովկասյան տարածաշրջանում ՀՀ կենսական շահերին ուղղված սպառնալիքները՝ հույժ կարևոր է տարածաշրջանում հիմնական դերակատարների շահերի վերլուծությունը և հնարավոր ռազմաքաղաքական գործընթացների ազդեցությունների գնահատումն ու կանխատեսումը: Այդ համատեքստում կարևորվում է նաև ՀՀ ազգային անվտանգության համատեքստում հավաքական (կոլեկտիվ) գործակցության զարգացման միտումների և պաշտպանական-անվտանգային սպառնալիքների ճշգրտումը՝ առկա մարտահրավերներին դիմակայունության աստիճանի գնահատման համար:

Պետք է փաստել, որ անցած տարիների ընթացքում բազմաթիվ ու տարբեր մակարդակներով ուսումնասիրություններ են իրականացվել ՀՀ անվտանգության կազմակերպման ու ռազմական գործառնության հիմնահարցերի վերաբերյալ, անցկացվել են գիտագործնական համաժողովներ՝ պետությունների ազգային և հավաքական անվտանգության հիմնախնդիրների վերաբերյալ: Միանշանակ, ընդգծվում են ոլորտի համար հիմքային նշանակություն ունեցող գիտահետազոտական հաստատությունների և առանձին մասնագետների աշխատությունները, որոնք կազմավորել են երկրի հավաքական անվտանգության համակարգի գիտատեսական հիմքը՝ դրանով իսկ հիմնարար հարթակ ստեղծելով ոլորտի գործնական զարգացման և դիտարկվող բացթողումների ու անճշտությունների վերացման համար: Սակայն, լուրջ համալիր գիտական հետազոտությունների կարիքը այս հիմնախնդիրների վերաբերյալ առավել քան օրակարգային է հատկապես արդի տարածքային անվտանգային ու ռազմաքաղաքական զարգացումների համատեքստում:

Ատենախոսության թեմայի շրջանակներում հետազոտված մասնագիտական գրականության աղբյուրների շարքում, նախևառաջ, առանձնանում են ընդհանուր անվտանգության համակարգային և դրանում հավաքական գործունեության ու քաղաքականության

ինստիտուտներին վերաբերող հետազոտությունները, որոնցում վերլուծվում են հատկապես փոքր պետությունների պաշտպանական-անվտանգային ուղղության հիմնական բաղադրիչներն ու դրանց բնորոշման առանձնահատկությունները[3]:

Թեմայի գլխավոր շեշտադրվածության հաշվառմամբ կարևորվել են Ազգերի լիգայի և Միավորված ազգերի կազմակերպության անցած փորձառությունների գնահատումները, որոնց նպատակն էր հավաքական անվտանգության հայեցակարգի հիման վրա ապահովել գլոբալ խաղաղություն և կանխել միջազգային կարգի խախտումները: Չնայած իրենց կարևոր դերակատարությանը՝ այս կառույցները բախվել են լուրջ մարտահրավերների, որոնք պայմանավորված էին ինչպես անդամ պետությունների միջև անհավասարություններով, այնպես էլ մեծ տերությունների գերիշխող ազդեցությամբ[4]:

Որպես Հայաստանի Հանրապետության հավաքական անվտանգության քաղաքականության արդիականացման կարևոր նպատակ կարելի է ընդգծել այն հիմնական կառուցակարգերի, երկարատև պլանավորման խնդիրների ու ռեսուրսների սահմանումը, որոնք հիմքն են ՀՀ անվտանգության ամբողջ համակարգի և, մասնավորապես, երկրի արտաքին ու պաշտպանական հնարավորությունների կառուցվածքային ու բովանդակային վերափոխման ու կիրառման, գործակցության հնարավորությունների և արժեքային կողմնորոշումների վերանայման, և

---

[3] **Քոչարյան Տ.**, Կոլեկտիվ անվտանգության տարածաշրջանային կազմակերպությունների առանձնահատկությունները. քաղաքագիտական վերլուծություն ՆԱՏՕ-ի և ՀԱՊԿ-ի օրինակով, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, N 3 (117), 2023, **Мешков А.**, СТРАТЕГИЧЕСКОЕ ПЛАНИРОВАНИЕ ВНЕШНЕПОЛИТИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ В ИНТЕГРАЦИОННЫХ ПРОЦЕССАХ, Монография. — М.: Проспект, 2019, **Perrin de Brichambaut M.**, The Indivisibility of Euro-Atlantic Security, Speech at the 18th Partnership for Peace Research Seminar, Vienna Diplomatic Academy, 4 February, 2010, **Abrahamyan E.**, War and Peace between Small States in the age of Competitive Multipolarity // War, Conflicts and Security, ARMAGORA, 2024:

[4] **Կիրակոսյան Ա.**, Վուդրո Վիլսոնը և Հայկական հարցը: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2015, N 1-2 (83-84), Сравнительный анализ уставов Лиги Наций и ООН, Актуальные проблемы теории и истории государства и права, 2019, Изд.: ФГБОУ ВО «ПГУ», **Dr. Stefan Aleksovski**, Collective Security – The Role of International Organizations – Implications in International Security Order, Mediterranean Journal of Social Sciences, MCSER Publishing, Rome-Italy, 2014, Vol 5 No 27:

այդ ամենով հանդերձ՝ ամուր ու հուսալի անվտանգության և պաշտպանունակության ապահովման համար[5]:

Որպես աղբյուրների առանձին խումբ կարելի է ներկայացնել ատենախոսության խնդրո առարկա հանդիսացող հիմնախնդիրների վերլուծության հիմքում դրված քաղաքական-իրավական փաստաթղթային ու օրենսդրական բազան, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներն ու նորմերը, հիմնարար բնույթ ունեցող միջազգային իրավական փաստաթղթերը (հռչակագրեր, կոնվենցիաներ, պայմանագրեր, համաձայնագրեր և այլն): Ուսումնասիրվել են նաև ՀՀ արտաքին գործերի ու պաշտպանության նախարարությունների արխիվային աղբյուրներ, նաև միջազգային ու տարածաշրջանային անվտանգային կազմակերպությունների, արտասահմանյան մի շարք երկրների անվտանգության ոլորտը և արտաքին գործունեության քաղաքականությունը կանոնակարգող նորմատիվ իրավական ակտերն ու ռազմավարական մակարդակի կարգավորման փաստաթղթերը[6]:

---

[5] **Արրահամյան Ս.**, ՀԱՊԿ-ի նոր անվտանգային ճարտարապետության ձևավորման որոշ հարցեր Հայաստանի Հանրապետության պաշտպանական անվտանգության ապահովման համատեքստում // «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, N 4 (58), 2008, **Ютяева И.Р.**, Миротворческая деятельность ООН в Африке: проблемы и перспективы, 2024, **Novikov A.**, “Military and political potential of the CSTO as a counterbalance to NATO policy”, Austrian Journal of Humanities and Social Sciences, no. 3-4, 2016, **Nazaretyan H.**, Armenia’s Peacekeeping Missions Abroad: A New Chapter With the EU, Jan 10, 2025:

[6] ՄԱԿ կանոնադրություն, ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 1992 թվականի մարտի 2-ից, Գլխավոր ասամբլեայի 46/227 բանաձև: Հայաստան – ՄԱԿ համագործակցություն, ՄԱԿ, Միջազգային Կազմակերպություններ, ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայք: Խաղաղապահ առաքելություններ, ՀՀ ՊՆ: ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն. Դիմակայուն Հայաստան փոփոխվող աշխարհում, Հուլիս 2020թ.: Միջազգային փոխգործակցության, անվտանգության և խաղաղության խթանում, ՀՀ ԱԺ 2008թ. դեկտեմբերի 4-ի ««ՀԱՊԿ խաղաղապահ գործունեության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» թիվ Ն-111-4 որոշում: Устав Лиги наций. 10 января 1920. Документы XX века. «Договор о коллективной безопасности», 15.05.1992. Collective defence and Article 5, North Atlantic Treaty Organization, 04.07.2023. Treaty of Peace with Turkey Signed at Lausanne, July 24, 1923. UN Peacekeeping Operations: Principles and Guidelines, 2008. European Commission, The EU and Armenia Comprehensive and Enhanced Partnership Agreement enters into force, 28.02.2021. U.S. National Archives. Truman Doctrine (1947), Foreign Assistance Act of 1948 and Economic Cooperation Act of 1948, NATO. Collective Defence and Article 5. North Atlantic Treaty, Article 10. 1949. Joint Doctrine for Military Operations Other Than War. Joint Chiefs of Staff: Joint Pub. 1995:

Հետազոտության օբյեկտը արդի աշխարհաքաղաքական և տարածաշրջանային զարգացումների համատեքստում Հայաստանի Հանրապետության անվտանգության բազմակողմ քաղաքականության ու կոլեգիալ պաշտպանության հիմնահարցերն են, դրա ապահովման համակարգում դիտարկվող քաղաքական-իրավական խնդիրների վերհանումը և հայեցակարգային հենքի կատարելագործման հնարավորությունների գիտագործնական գնահատումը:

Ատենախոսության առարկան ընդհանրապես հավաքական անվտանգության քաղաքականությանը և դրա ապահովման գործընթացին առնչվող քաղաքական-իրավական հիմնախնդիրներն են, Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական մակարդակում հավաքական անվտանգային գործակցության ու պաշտպանության ալգորիթմի կարևորումը և հենքային ռազմավարությունների, պլանների և ծրագրերի հաջորդականությունը՝ միջազգային ու տարածաշրջանային անվտանգային զարգացումների հաշվառմամբ:

Հետազոտության նպատակը և խնդիրները:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության հավաքական անվտանգության գործակցության, համապարփակ դիմակայության ու պաշտպանության համակարգի էությունը, բացահայտել այդ քաղաքականության մշակման ու իրագործման առանձնահատկությունները, գնահատել այդ գործընթացի հիմքում հայեցակարգային ամրագրումների արդյունավետությունը, ինչպես նաև վերլուծել Հարավային Կովկասի տարածաշրջանում և դրանից դուրս գլոբալ աշխարհաքաղաքական ու միջազգային անվտանգության տիրույթներում Հայաստանի Հանրապետության անվտանգային քաղաքականության կոլեգիալության ռազմավարական համադրումները:

Այս նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ հետազոտական խնդիրները՝

- ուսումնասիրել հավաքական անվտանգության ինստիտուցիոնալ սահմանման ու էության առանձնահատկությունները,
- հետազոտել հավաքական անվտանգային գործակցության միջազգային փորձի ձևավորման և կայացման զարգացումները,
- վերլուծել միջազգային և տարածաշրջանային անվտանգային գործընթացների հիմքային դերն ու նշանակությունը ազգային մակարդակում անվտանգության բազմակողմ ձևաչափի երաշխավորման գործում,
- գիտահետազոտական հիմքով գնահատել Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության շրջանակներում հավաքական գործակցության կիրարկման արդի խնդիրները և դրանց պատճառ-հետևանաքային ասպեկտները,

- առանձնացված վերլուծել ՀՀ գործակցությունը միջազգային և տարածաշրջանային առանցքային կազմակերպությունների հետ, վերհանել դիտարկված խնդրահարույց կողմերը, նախանշել այդ ուղղությամբ քաղաքականության զարգացման հնարավորությունները,

- բացահայտել հավաքական գործակցության ու պաշտպանության ձևաչափում խաղաղապահ գործունեության առանցքային նշանակությունը, Հայաստանի Հանրապետության անվտանգության իրականության մեջ խաղաղապահության դրսևորումները և նպատակային շրջանակները:

Ատենախոսության տեսամեթոդական հիմքը:

Աշխատանքի տեսական աղբյուրները վերաբերում են հավաքական անվտանգությանն առնչվող հիմնահարցերին և ՀՀ գործակցության նման ձևերի վերաբերյալ առանձնացված վերլուծություններին: Ատենախոսության տեսական հիմքը կառուցված է հետազոտության թեմատիկ հիմնահարցերին վերաբերող գիտավերլուծական աշխատությունների և պաշտոնական դիրքորոշումների ու գնահատականների վերլուծության վրա:

Քանի որ ատենախոսությունը որոշակիորեն ունի նաև միջառարկայական բնույթ, ապա այս տեսանկյունից ատենախոսության համար հիմք են ծառայել նաև երկրի ներքին ու արտաքին անվտանգային միջավայրի, ոլորտում իրականացվող քաղաքական-իրավական գործընթացների և մի շարք այլ հարցերի վերաբերյալ քաղաքագետների, իրավագետների, տնտեսագետների, սոցիոլոգների, փիլիսոփաների և այլ գիտահետազոտական ուղղությունների տարբեր հրատարակումներ:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես գիտահետազոտական շրջանակներում հիմնավորված ու գործնականում լայն կիրառում ունեցող ընդհանուր բնույթի՝ դիալեկտիկական և համակարգային գիտահետազոտական մեթոդները, այնպես էլ մասնավոր, կոնկրետացվող նշանակության՝ իրավաքաղաքական վերլուծության, համեմատական, համակարգակառուցվածքային, պատմահիրավական, վիճակագրական գնահատման և մի շարք այլ մեթոդներ: Գիտական աշխատանքում համադրվել են մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետները, գնահատականներն ու դիրքորոշումները, ուսումնասիրվել են նորմատիվ իրավական բազայի հիմնական կարգավորումները, համեմատվել են միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների, արտասահմանյան առաջավոր փորձ ունեցող երկրներում հավաքական անվտանգության ոլորտի և դրա ապահովմանն ուղղված քաղաքականության զարգացման առանձնահատկությունները:

Ատենախոսության գիտական նորույթը: Անվտանգության քաղաքականությունը շարունակում է արդիական և միևնույն ժամանակ

բազմամակարդակ դրևսրումներ ու կիրառումներ ցուցաբերել: Հավաքական անվտանգություն և հավաքական պաշտպանություն ինստիտուտները սկզբնավորվել են դեռևս 20-րդ դարասկզբին և զարգացել տարբեր համաշխարհային ու տարածաշրջանային իրադարձությունների ազդեցությամբ: Որպես այդպիսին՝ երկու հայեցակարգերը երկարաժամկետ պաշտոնական պարտավորություն են պետությունների ու դրանց խմբերի միջև՝ իրենց շահերի համատեղ ոլորտներում հավաքական և առանձին անդամների անվտանգության շահերը պաշտպանելու նպատակով:

Այս առումով հարկ ենք համարում նշել, որ ժամանակակից աշխարհում միջազգային ու տարածաշրջանային անվտանգությունները ներկայումս դարձել են ավելի բարդ ու բազմաբաղադրիչ համակարգեր, որտեղ պետություններն իրենց անվտանգային շահերն ապահովում են ինչպես անհատական, այնպես էլ դաշինքային-կոալիցիոն ձևաչափերում:

Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգային գործակցության ձևաչափում իր առանցքային դերն ու նշանակությունն ունի դաշինքային քաղաքականությունը, որի ամենից տեսանելի դրսևորումը Հայաստանի անդամակցությունն է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը (ՀԱՊԿ) և ակտիվ գործընկերությունը Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) հետ: Սակայն վերջին տարիներին ՀՀ-ՀԱՊԿ հարաբերություններում դիտարկվում են լուրջ խնդիրներ և ներկայիս փուլում ՀՀ արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացիայի շրջանակներում առավել կարևորվում են գործակցության բալանսավորումը, տարածաշրջանային և միջազգային դաշտերում մանևրելու հնարավորությունների ընդլայնումը, և որպես արդյունք՝ պետության խոցելիության նվազեցումն ու ինքնիշխանության ամրապնդումը:

Իրականացված հետազոտության արդյունքում առաջ են քաշվել գիտական նորույթ պարունակող հետևյալ դրույթները.

1. Տեսագործնական հիմքերի շեշտադրմամբ հետազոտվել և գնահատվել են հավաքական անվտանգության՝ որպես խմբային համակարգի ապահովման հիմնական տարբերակները (միություններ, դաշինքներ)՝ հիմնված ուժերի հավասարակշռության հայեցակարգի վրա: Կարևորվել է, որ հավաքական անվտանգության համակարգում «թշնամին» սպառնալիք է տարածաշրջանային կամ միջազգային խաղաղության և անվտանգության համար: Եթե հավաքական անվտանգության համակարգը իր հասանելիության սահմաններում միջազգային է, ապա սպառնալիք կարող է ծագել ցանկացած տարածաշրջանում, երկրագնդի ցանկացած կետում:

2. Բացահայտվել են հավաքական անվտանգության շրջանակներում անուղղակի ազդեցության, սակայն կարևոր նշանակություն ունեցող մի շարք գործոններ, մասնավորապես՝ օրենքի գերակայության համատեղ հարգանքը, տնտեսական ու ֆինանսական ընդհանուր շահեր ունենալու առաջնահերթությունը, զարգացած ապրանքաշրջանառությունը, ակտիվ տնտեսական շփումները, որոնք մի կողմից ամրապնդում են կայացող, տարբեր աշխարհընկալում ունեցող և զարգացման տարբեր մակարդակներում գտնվող երկրների դաշինքները, մյուս կողմից՝ պայմաններ ստեղծում, որ դրանք առավել կենսունակ լինեն՝ ունենալով հստակ ուրվագծելի ու փոխշահավետ զարգացման հեռանկարներ:

3. Վերլուծվել են այնպիսի անվտանգային կարևոր նախապայմաններ, համաձայն որոնց՝ քանի դեռ արևմտյան երկրների համար իսկապես առկա են (կամ գոնե նշված են) ընդհանուր խնդիրներ, որոնք լուծում են պահանջում անվտանգային, ռազմաքաղաքական կազմակերպության գործառնական դաշտում, և քանի դեռ խնդիրները հիմնականում լուծվում են ամերիկյան ռեսուրսների միջոցով, ԱՄՆ-ի դոմինանտ ազդեցությունը լուրջ կասկածի տակ չի դրվի:

4. Կանխատեսվել են ԱՄՆ-ի գերակայությունը և հավաքական անվտանգության ծանրությունը կրելու նրա պատրաստակամությունը որպես ՆԱՏՕ-ի գոյության համար կարևոր գործոն: Միաժամանակ, Հյուսիսատլանտյան դաշինքը նույնպես կարևոր տեղ է զբաղեցնում Միացյալ Նահանգների գլոբալ ծրագրերում (օրինակ՝ ընդլայնում է ամերիկյան վերահսկողության գոտին դեպի Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի հանրապետություններ), հետևաբար՝ Վաշինգտոնը, նաև ռուս-ուկրաինական հակամարտության ու դրան հնարավոր հանգուցալուծման վերջին ջանքերի հաշվառմամբ, պատրաստ է հաշտվել եվրոպական բաղադրիչի ռազմական ու անվտանգային «անկարողության» հետ, բայց չի «ներելու» և չի համակերպվի եվրոպական ընդդիմական հնարավոր դրսևորումների հետ:

5. Որպես ՀՀ հավաքական անվտանգային գործակցության հիմնախնդիր՝ փորձ է արվել բացահայտելու ՀԱՊԿ-ի կայացման ամենից կարևոր ցուցիչը՝ նրա քաղաքական դերի ու անդամ երկրների համար անվտանգության ընդհանուր ընկալումների համատեքստում, հավաքական շահերի մշակումն ու իրացումը: Կազմակերպության գործունեության ներկա փուլում հանդիպող մարտահրավերների թվում կարող ենք առանձնացնել անդամ-պետությունների ազգային շահերի՝ միմյանցից օբյեկտիվորեն տարբերվող բաղադրիչները, վտանգների ու սպառնալիքների ընդհանուր ընկալումների տարբերությունները, հավաքական միջոցներով դրանց արձագանքելու ոչ միշտ առկա պատրաստակամությունը, կանոնադրությամբ պարտադիր իրացման նորմ

հանդիսացող փոխադարձ աջակցության ու օժանդակության գործողությունների նկատմամբ անդամների տարբերվող մոտեցումները, երրորդ երկրների հետ հարաբերություններում անդամ երկրների՝ միմյանցից տարբերվող շահերն ու քաղաքականությունը, արտաքին հարթակներում ոչ պատշաճ գործակցության բացակայությունը և այլն:

6. Պաշտոնական ու փորձագիտական սկզբնաղբյուրներում ամրագրված, ինչպես նաև մասնագիտական գրականության մեջ առկա դիրքորոշումների հիման վրա բազմակողմանի գնահատվել են Հայաստանի Հանրապետության անվտանգային շահերը հավաքական գործակցության ձևաչափում: Որպես կարևոր հետևություն արձանագրվել է, որ հավաքական անվտանգության արդյունավետության ու կենսունակության առաջնային ցուցանիշն ազգային շահերի համադրելի մոտեցումներն են և դրանց հիմքով քաղաքական համակարգված վարքի դրսևորումը միջազգային կազմակերպությունների հարթակներում:

7. Տեսական վերլուծությամբ գնահատվել է ՀՀ բալանսավորված անվտանգային արտաքին քաղաքականության առաջնահերթությունը: Ներկայիս պայմաններում Հայաստանի համար չափազանց կարևոր է արտաքին հարաբերությունների ճշգրիտ բալանսավորումը և բազմավեկտորության կիրառումը՝ խուսափելով արտաքին քաղաքականության ինչպես կտրուկ, բայց ամբողջապես չգնահատված ու չհիմնավորված շրջադարձերից, այնպես էլ անվտանգային գործակցության կարծրացած կառուցակարգերի շարունակականությունից: Այս համատեքստում կարևորվում է 2026 թվականի ընտրություններից հետո սպասվող սահմանադրական բարեփոխումներում անվտանգային հավաքական ձևաչափի արդյունավետ կուրսի ընտրությունն ու զարգացումը:

8. Ատենախոսության շրջանակներում առաձնացված գնահատվել է, որ խաղաղության ապահովման նման գործողություններին մասնակցությունը ՀՀ-ի համար կարևոր է միջազգային անվտանգության ապահովման կառույցների հետ արդյունավետ գործակցային ձևաչափ հաստատելու, խաղաղապահ բրիգադների հիմքով ձեռք բերած մասնագիտական փորձը ներդնելու և պետության հեղինակությունը բարձրացնելու համար: ՀՀ-ն, որդեգրելով արտաքին ու անվտանգության անհամաչափ բազմավեկտորության սկզբունք, իր զինված ուժերի համար հմտություններ ձեռք բերելու հավելյալ հնարավորություն է ստանում փոխլրացնելու և զարգացնելու հավաքական անվտանգային գործակցության ձևաչափերը:

9. Միջազգային իրավունքն ու միջազգային իրավական ռեժիմի ամրապնդումը կարևոր գործիք են պետությունների ու դրանց համախումբ միությունների արտաքին քաղաքական շահերը պաշտպանելու համար:

Այդ առումով՝ ՀՀ-ի համար առաջնային է զարգացնել նաև իրավական դիվանագիտության գործիքակազմն արտաքին անվտանգային քաղաքականության մեջ, ինչն իր հերթին նպաստելու է միջազգային ու տարածաշրջանային անվտանգային համակարգերի կատարելագործմանը: Հավաքական անվտանգության քաղաքականության շրջանակների շեշտադրմամբ իրավական գործիքակազմի համակարգված ու արդյունավետ օգտագործումը հնարավորություն կտա միջազգային իրավական ռեժիմի շրջանակներում խթանելու և առաջ մղելու հայությանը մտահոգող հարցերն ու խնդիրները և պաշտպանելու Հայաստանի Հանրապետության ազգային շահերը:

Ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը:

Հետազոտության շրջանակները բավականին լայն են, քանի որ ընդգրկում են ՀՀ անվտանգության համակարգում հիմնարար դեր ու նշանակություն ունեցող արտաքին բազմակողմ քաղաքականության հայեցակարգային ամրագրման ու գործնականում իրականացման հիմնահարցերը, որոնց համեմատական վերլուծության հիման վրա առաջ են քաշվում զարգացումների և դիտարկվող հիմնախնդիրների ուսումնասիրության համապարփակ մոտեցումներ: Ատենախոսության տեսական արժեքն է նաև հավաքական անվտանգության գործակցության արդյունավետության վերլուծական գնահատումը, դիտարկվող խնդիրների համատեքստում քաղաքականության զարգացման, բարեփոխումների հաջորդականության և առանձին ուղղությունների կանխատեսումը:

Առաջարկվող տեսական ամփոփումները և եզրահանգումները կարող են նաև մեթոդաբանական հիմք ծառայել ազգային անվտանգության բնագավառում և բազմակողմ գոծակցության հայեցակարգային հիմնահարցերին վերաբերող նոր գիտական հետազոտությունների համար: Բացի այդ, գործնական նշանակության տեսանկյունից ատենախոսությունը կարող է նաև օգտակար լինել ՀՀ համապարփակ անվտանգության ու պաշտպանության համակարգի կատարելագործման ու հայեցակարգային հիմքերի, ռազմավարական փաստաթղթերի մշակման գործընթացում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Աշխատանքը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի Քաղաքական հետազոտությունների բաժնի կողմից: Ատենախոսության դրույթները հրապարակվել են գիտական հանդեսներում՝ թվով 6 հոդվածներով:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ 8 ենթագլուխներով, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի **ներածությունում** հիմնավորվում է թեմայի արդիականությունը, սահմանվում են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացվում են տեսամեթոդական հիմքը, գիտական նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը, ինչպես նաև աշխատանքի փորձարկման և կառուցվածքի մասին տեղեկություններ:

Առաջին գլխում՝ «**Հավաքական անվտանգության գործակցությունը միջազգային բազմակողմ հարաբերությունների համատեքստում**» վերտառությամբ, քննարկվում են բազմակողմ գործակցության էությունը և տեսագործնական նշանակության հիմնահարցեր: Առաջին՝ «**Հավաքական գործակցությունը որպես անվտանգային արտաքին քաղաքականության առանցքային կառուցակարգ**» ենթագլխում, համակողմանի հետազոտվում է հավաքական գործակցությունը որպես անվտանգային արտաքին քաղաքականության առանցքային կառուցակարգ, գիտահետազոտական վերլուծությամբ գնահատվում են գործակցության այդ ձևաչափի զարգացման առանձնահատկությունները: Ներկայումս համաշխարհային միջազգային համակարգն ունի ինչպես միաբևեռության, այնպես էլ բազմաբևեռության բաղադրիչներ: Նախորդ դարում սառը պատերազմի ժամանակ ձևավորված դաշինքների կառավարման սկզբունքները շատ առումներով մնում են արդյունավետ նաև աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային արդի զարգացումների համատեքստում:

Երկրորդ ենթագլխում՝ «**Փոքր պետությունների ներգրավվածությունն արդի միջազգային բազմակողմ գործակցության ձևաչափում**», նշվում է, որ արդի բազմաբևեռ աշխարհակարգում միջազգային կառույցներն կարևոր դեր են խաղում պետությունների միջև համագործակցության, հակամարտությունների կանխարգելման և գլոբալ կառավարման հարցերում: Փոքր պետությունների համար միջազգային կազմակերպությունները ոչ միայն հարթակ են սեփական շահերն առաջ մղելու, այլև անվտանգության, տնտեսական զարգացման և քաղաքական կայունության ապահովման միջոց: Այդուհանդերձ, միջազգային կազմակերպություններում որոշ մեխանիզմներ ապահովում են փոքր պետությունների մասնակցությունը, նրանք դեռ բախվում են քաղաքական ազդեցության անհավասարությանը, ռեսուրսների պակասին և խոշոր տերությունների գերիշխանությանը:

Երկրորդ գլուխը՝ «**Հավաքական անվտանգության մոդելի սկզբնավորումը և հետագա զարգացումները Ազգերի լիգայի ու Միավորված ազգերի կազմակերպության ձևաչափում**» վերնագրով, բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին՝ « **Հավաքական անվտանգության**

և փոխգործակցության մոդելը Ազգերի լիգայի և Միավորված ազգերի կազմակերպության օրինակներով» ենթագլխում համառոտ բնութագրվում են հավաքական անվտանգության և փոխգործակցության մոդելի ինստիտուցիոնալ բնութագրիչները Ազգերի Լիգայի և Միավորված Ազգերի Կազմակերպության օրինակներով, վերլուծվում են այդ կազմակերպություններին վերաբերող զարգացումները: Եվ Ազգերի լիգան, և ՄԱԿ-ը կոնկրետ պատմական շրջանների «արգասիքներ» են՝ ստեղծված իրենց աշխարհաքաղաքական միջավայրին համապատասխան, և արտացոլում են մարդկության քաղաքական ու իրավական զարգացածության՝ տվյալ պահին բնորոշ մակարդակները:

Երկրորդ՝ «**Ազգերի լիգայի և Միավորված ազգերի կազմակերպության ուժեղ և թույլ կողմերի համեմատական գնահատում**» ենթագլխում, ընդգծվում է, որ հատկապես Հայաստանի Հանրապետության ազգային ինքնության, անվտանգային շահերի պատմական տարբեր շրջաններում առաջմղման ու օժանդակության համատեքստում՝ ՄԱԿ-ն ունի ԱԼ-ի նկատմամբ զգալի առավելություններ, թեև ինքն էլ զերծ չէ թուլություններից: Փորձը ցույց է տալիս, որ աշխարհի առաջատար պետությունների միջև հարաբերությունների սրման ժամանակ ԱԽ–ի մշտական անդամները հաճախ տարբեր կերպ են մեկնաբանում ՄԱԿ-ի կանոնադրության դրույթները և վետոյի իրավունքը կիրառում են ոչ թե կանոնադրության նորմերի հաշվառմամբ, այլ հակամարտային դիրքորոշումների և առճակատումային հարաբերությունների հիման վրա:

Երրորդ գլուխը՝ «**Հայաստանի Հանրապետության ինտեգրվածությունը հավաքական անվտանգային գործակցության արդի կառուցակարգերին**» վերնագրով, բաղկացած է չորս ենթագլխից: Առաջին՝ «**Հայաստանի Հանրապետությունը Եվրոպական միության հավաքականության և ինտեգրացիոն տեսլականում**» ենթագլխում հիմնավորվել է այն դրույթը, համաձայն որի՝ թեև եվրաինտեգրման գործընթացները սկզբնական շրջանում ՀՀ-ում տեղի էին ունենում ավելի դանդաղ և սահմանափակ մասշտաբներով, 2020 թվականից հետո կտրուկ աճել է արևմուտքի հետ հարաբերությունները խորացնելու տեսլականը՝ կապված ՌԴ-ի հետ դաշնակցային հարաբերությունների նվազեցման փուլի հետ: Չնայած Եվրամիության հետ վերջին շրջանում քայլ առ քայլ ակտիվացող համագործակցությանը, և հանրային կարծիքի վերջին փոփոխություններին՝ կարևոր է ՀՀ քաղաքական և հասարակական շրջանակներում Եվրամիությունից և ՀՀ-ԵՄ հարաբերություններից չափազանցված ակնկալիքների կառավարումը:

Երկրորդ ենթագլխում՝ «**Հայաստանի Հանրապետության պաշտպանական-անվտանգային գործակցությունը Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ-ի) հետ**», նշվում է, որ ՀՀ-ՆԱՏՕ համագործակցությունը՝

հատկապես խաղաղապահ առաքելությունների շրջանակներում, Հայաստանի համար ոչ այնքան անվտանգությունն ապահովելու նպատակներ է հետապնդում, որքան բարձրացնում է ՀՀ միջազգային դերը, ինչպես նաև այս ուղին իր մեծ նպաստն է բերում ՀՀ եվրոպական ինտեգրմանը: Հայաստանը, համագործակցելով ՆԱՏՕ-ի հետ, իրականացնում է իր «ներգրավման» և «փոխլրացման» արտաքին քաղաքականությունը:

Երրորդ՝ «**ՀԱՊԿ-ի ռազմավարական զարգացումների ու արդի հնարավորությունների վերլուծական գնահատում ՀՀ անվտանգային շահերի տեսանկյունից**» ենթագլխում, ներկայացվում է ՀՀ դաշինքային քաղաքականությունը ՀԱՊԿ-ին անդամակցության համատեքստում: Արդարացիորեն ընդգծվում է, որ Հայաստանը ՀԱՊԿ-ում կապված է եղել Ռուսաստանի հետ երկկողմ հարաբերություններով, քան կառույցի մնացած մասի հետ: Այսօր ՀԱՊԿ-ը ՀՀ-ում ընկալվում է ոչ թե պաշտպան, այլ «անօգուտ և նույնիսկ վնասակար կառույց», որը գոյություն ունի միայն թղթի վրա: Հանրային վստահության այս մակարդակի կորուստը աննախադեպ է և խոսում է «համակարգային ձախողման» մասին: Որպես ազդող հանգամանք՝ կարելի է շեշտել այն, որ ՀԱՊԿ-ի մյուս անդամները հավասար կամ նույնիսկ ավելի լավ հարաբերություններ ունեն Ադրբեջանի հետ, քան Հայաստանի Հանրապետության:

Չորրորդ ենթագլխում՝ «**Խաղաղապահ առաքելությունները որպես հավաքական անվտանգային քաղաքականության կառուցակարգ (հայաստանյան դիսկուրս)**» վերնագրով, նշվում է, որ ՀՀ-ն մասնակցում է և իր ներդրումն է անում լայն շրջանակի սպառնալիքներին դիմագրավելուն ու չեզոքացնելուն ուղղված միջազգային հանրության հավաքական ջանքերին: ՀՀ մասնակցությունը խաղաղապահ գործողություններին բխում է իր ազգային անվտանգության շահերից, քանի որ իր անվտանգությանն սպառնացող մարտահրավերները կարող են ծագել ոչ միայն իր սահմանների անմիջական հարևանությամբ կամ մոտ տարածաշրջանից, այլև հեռավոր ուղղություններից (հաշվի առնելով նաև ներկայիս սպառնալիքների ու վտանգների տարածական ու վերաբերելիության շրջանակները):

Ատենախոսությունում ներկայացված հավաքական անվտանգության ձևաչափի տեսագործնական գնահատումների, միջազգային կազմակերպությունների հովանու ներքո նախաձեռնված ու շարունակված զարգացումների, ինչպես նաև ՀՀ արտաքին անվտանգային բազմակողմ գործակցության համապարփակ վերլուծությամբ արվում են հետևյալ հիմնարար **եզրահանգումները**.

1. Արդի աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային զարգացումների համընդգրկուն գնահատումը ցույց է տալիս, որ անվտանգության

ապահովման հավաքական (դաշինքային) մոդելն ամենատարածվածն է և ամենակիրառականը, որտեղ անդամ պետությունները միմյանց օգնություն են ցուցաբերում համադասված եղանակով և այդ պարտավորությունն ամրագրված է տվյալ դաշինքի կանոնադրությունում: Ուժերի հարաբերակցության տեսությունը ներկայումս հավաքական անվտանգության մոդելում հանգեցնում է հետևյալ հարցերին. ի՞նչ պայմաններում են ստեղծվում դաշինքները, ինչն է որոշում, թե ով և ում հետ կարող է դաշնակցել, ինչպես է ձևավորվում դաշնակիցների միջև ծախսերի և օգուտների բաշխման համակարգը և մի շարք այլ հարցադրումներ:

2. Արդի միջազգային հարաբերություններում պետությունները, հատկապես՝ փոքր պետությունների կոնկրետացմամբ, որդեգրում են անվտանգային և մյուս մարտահրավերներին դիմակայելու ռազմավարություններ: Նրանց ընտրած ռազմավարությունները՝ պասիվ, պաշտպանողական կամ ակտիվ, կախված են ոչ միայն ռեսուրսներից, այլև քաղաքական վերնախավի կարողությունից՝ ճիշտ գնահատելու միջազգային միջավայրն ու գտնելու հավասարակշռության կետը՝ անվտանգության, ինքնիշխանության և զարգացման միջև:

3. Փոքր պետությունները, չնայած իրենց սահմանափակումներին, կարող են դառնալ ազդեցիկ և նախաձեռնող դերակատարներ՝ պայմանով, որ ունակ են խելամիտ ձևով կառավարել իրենց ներքին ռեսուրսները և ստեղծել կայուն ու ճկուն արտաքին քաղաքականություն: Նրանց ուժը չի սահմանափակվում նյութական գործոններով, այլ հիմնվում է ռազմավարական կողմնորոշման, գաղափարական համախմբվածության, միջազգային գործընկերների հետ արդյունավետ աշխատանքի և ինստիտուցիոնալ համագործակցության վրա:

Հատկապես բազմակողմ ձևաչափում միջազգային հարաբերություններում փոքր պետության ուժը չափվում է ոչ միայն նրա տարածքային, ժողովրդագրական մեծությամբ, այլև՝ նրա կարողությամբ գործել խելացի, համառ, ճկուն և նպատակաուղղված: Այս պետությունները կարող են հանդես գալ ոչ միայն որպես անվտանգության սպառողներ, այլ նաև՝ որպես խաղաղարարներ, միջազգային նորմերի տարածողներ և գլոբալ մարտահրավերների լուծման համատեղ գործողությունների կրողներ: Փոքր պետություններն ապավինում են բազմակողմ գործակցությանը, իրավական մեխանիզմներին և նիշային (niche) դիվանագիտությանը, որոնք թույլ են տալիս նրանց բարձրացնել իրենց քաղաքական կշիռը միջազգային կազմակերպություններում՝ առանց ուժային ռեսուրսների:

4. Ատենախոսությունում ներկայացված վերլուծության արդյունքում գնահատվել է, որ ՀՀ անվտանգության դիրքերից ՀՀ-ՆԱՏՕ հարաբերությունների տեսագործնական զարգացումները կարելի է առանձնացնել հետևյալ ռազմավարական ուղղություններով.

- Հարաբերությունների զարգացումն այդ կազմակերպության հետ օբյեկտիվորեն բխում է ՀՀ շահերից, մասնավորապես՝ անվտանգության ոլորտում բազմազանեցման ու ենթաոլորտների տարանջատման առումներով:

- ՀՀ-ին հնարավորություն է տալիս արտաքին քաղաքականության հարթակում ևս հարաբերություններ կառուցելու եվրոպական ու ատլանտյան առաջատար երկրների հետ. յուրացնելու անվտանգության ու ռազմական պլանավորման ոլորտում նրանց դրական փորձը:

- Դաշինքի հետ գործակցությունը ՀՀ-ին հնարավորություն է տալիս էլ ավելի գործուն դեր ունենալու միջազգային անվտանգության ճարտարապետության տեղային դրսևորումներում, և դրանով իսկ հիմք է ստեղծում խաղաղապահ բրիգադների փորձառություն ձեռք բերելու համար:

- Հատկապես ԱԳԳԾ բաղադրիչը կանոնակարգում է ռազմաքաղաքացիական հարաբերությունները, ուրվագծում է բանակում կոռուպցիոն դրսևորումների դեմ պայքարը, առավել արդյունավետ է դարձնում անվտանգության ու ռազմապաշտպանական ոլորտներում հանրային իրազեկումը, գործուն աջակցություն է ցուցաբերում հայեցակարգային փաստաթղթերի պատրաստմանը, նոր տեխնոլոգիաները և հմտություններ փոխանցումը:

5. Հավաքական անվտանգության հիմնախնդիրների համատեքստում հարկ է ընդգծել, որ ինչպես ՆԱՏՕ-ում, այնպես էլ ՀԱՊԿ-ում անդամ պետությունները խիստ տարբերվող քաղաքական և ռազմական ներդրումներ են իրականացնում, բայց ստանում են նույն երաշխիքները: Սակայն իրողություն է, որ Ռուսաստանը ՀԱՊԿ-ի քաղաքական-ռազմական շրջանակներում որոշակիորեն «թելադրող» պետություն է: Այստեղ խնդիր է առաջանում հասկանալ, թե ինչպես են իրացվում այդ երաշխիքները և արդյոք կազմակերպությունը կատարում է իր կանոնադրական պարտավորությունները: ՀԱՊԿ-ի կողմից ընդունված որոշ կարգավորումներ չունեն իրականացման անհրաժեշտ մեխանիզմներ: Օրինակ՝ ՀԱՊԿ-ն ունի միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության կարգավորող դաշտ, սակայն դրա իրականացման մեխանիզմները հստակեցված չեն: Դրա պատճառով այսօր միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը սահմանափակ է:

6. ՀԱՊԿ-ը ստեղծվել է որպես փոխադարձ պաշտպանության կառույց, սակայն Հայաստանի համար վճռորոշ պահերին (հատկապես 2020թ. պատերազմից հետո և 2021-2023 թթ. սահմանային լարվածությունների ժամանակ) կազմակերպությունը գործնական աջակցություն չի ցուցաբերել: Կազմակերպության պասիվությունը հանգեցրել է հանրային հիասթափության և այն ընկալմանը, որ ՀԱՊԿ-ը չի ծառայում Հայաստանի

ազգային շահերին, այլ հիմնականում արտացոլում է առանձին անդամ պետությունների քաղաքական օրակարգը:

7. ՀՀ անվտանգության ընկալումը վերափոխվում է, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանն անվտանգության զուտ սպառողից վերածվում է միջազգային խաղաղության և անվտանգության ապահովմանն ուղղված հավաքական ջանքերին ներդրում կատարող պետություն: ՀՀ-ն իր անվտանգության երաշխավորման համատեքստու ոչ միայն իրականացնում է զսպման քաղաքականություն, այլ նաև որպես միջազգային հանրության լիիրավ անդամ ու համաշխարհային գործընթացներին մասնակից պետություն ներգրավվում է միջազգային խաղաղության հաստատման գործողություններին: Ավելին՝ դրա շնորհիվ ավելի է ընդգծվում Հայաստանի Հանրապետության առանցքային դերակատարությունը Հարավկովկասյան տարածաշրջանային անվտանգության ապահովման և կայունության ամրապնդման գործում:

Ատենախոսության հիմնական դրույթները և նորույթ պարունակող եզրակացություններն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1. **Շիրինյան Մ.,** Հավաքական գործակցության մոդելը անվտանգային արտաքին քաղաքականության ձևաչափում. տեսամեթոդական գնահատումներ // «Գիտական Արցախ» հանդես, 2024, N 4 (23), էջ 60-72:

2. **Շիրինյան Մ.,** Կոլեկտիվ անվտանգության ձևաչափը Ազգերի Լիգայի և Միավորված Ազգերի Կազմակերպության օրինակով. համեմատական վերլուծություն // «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2025, N 1 (123), էջ 81-95:

3. **Շիրինյան Մ.,** "Small States in Modern International Multilateral Relations" // «Կաճառ/Ակադեմիա» հասարակագիտական պարբերական, Երևան, 2025, № 2, էջ 201-210:

4. **Շիրինյան Մ.,** ՀԱՊԿ-ի ռազմավարական զարգացումների ու արդի հնարավորությունների վերլուծական գնահատում ՀՀ անվտանգային շահերի տեսանկյունից // «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2025, N 2 (124), էջ 87-98:

5. **Շիրինյան Մ.,** ՆԱՏՕ-ի ընդլայնումը որպես Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգային քաղաքականության կարևոր կողմնորոշիչ // «Գիտական Արցախ» հանդես, 2025, N 2 (25), էջ 141-153:

6. **Քոչարյան Տ., Շիրինյան Մ.,** Միջազգային խաղաղապահական օպերացիաները և Հայաստանի Հանրապետության մասնակցությունը դրանց // «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2025, N 4 (126), էջ 35-46:

ШИРИНЯН МГЕР АРМОЕВИЧ

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ СОТРУДНИЧЕСТВА В ОБЛАСТИ КОЛЛЕКТИВНОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В НАСТОЯЩЕЕ ВРЕМЯ

Диссертация на соискание научной степени кандидата политических наук по специальности 23.00.02 “Политические институты и процессы”. Защита диссертации состоится 7-ого мая 2026 г. в 16:00 часов на действующем в ЕГУ специализированном совете 056 "Политология и международные отношения" МОНКС КВОН РА
(адрес: РА, г. Ереван, 0025, Алека Манукяна, 1).

РЕЗЮМЕ

Геополитические реалии, окружающие Республику Армения, и нынешний императив регионального сотрудничества требуют всестороннего и последовательного анализа вопросов национальной безопасности и политики ее обеспечения. Целью диссертации является изучение сущности коллективного сотрудничества в сфере безопасности Республики Армения, всеобъемлющей системы противостояния и обороны, выявление особенностей развития и реализации этой политики, оценка эффективности концептуальных положений, лежащих в основе этого процесса, а также анализ стратегических сочетаний коллегиальности политики безопасности Республики Армения в регионе Южного Кавказа и за его пределами в сфере глобальной и международной безопасности.

Комплексная оценка текущих геополитических и региональных событий показывает, что наиболее распространенной и практичной является коллективная (альянсовая) модель обеспечения безопасности, в рамках которой государства-члены оказывают друг другу помощь скоординированным образом, и это обязательство закреплено в уставе соответствующего альянса. Теория баланса сил, существующая в настоящее время в рамках модели коллективной безопасности, приводит к следующим вопросам: при каких условиях создаются альянсы, что определяет, кто с кем может вступать в союз, как формируется система распределения затрат и выгод между союзниками. В этом контексте подчеркивается выбор и развитие эффективного курса формата коллективной безопасности в рамках конституционных реформ, ожидаемых после выборов 2026 года.

Работа состоит из введения, трёх глав, заключения и списка литературы. Во введении обосновывается актуальность темы, научная

степень проблемы, определяются цель и задачи, научная новизна исследования, теоретическая и практическая значимость работы.

В первой главе диссертации, озаглавленной «**Партнерство в области коллективной безопасности в контексте международных многосторонних отношений**», автор диссертации всесторонне рассмотрел коллективное партнерство как ключевой механизм внешней политики безопасности, а также участие малых государств в формате современного международного многостороннего сотрудничества.

Во второй главе диссертации под названием **«Истоки и дальнейшее развитие модели коллективной безопасности в формате Лиги Наций и Организации Объединенных Наций»** анализируются институциональные особенности модели коллективной безопасности и сотрудничества на примерах Лиги Наций и ООН, после чего проводится сравнительная оценка сильных и слабых сторон Лиги Наций и ООН.

В третьей главе под названием «**Интеграция Республики Армения в современные механизмы партнерства в области коллективной безопасности**» автор, используя научно-аналитический подход, рассматривает Республику Армения в коллективно-интегративной концепции Европейского союза, а также исследует и оценивает оборонно-безопасное партнерство Республики Армения с НАТО. В этой главе, с точки зрения интересов безопасности Республики Армения, с использованием комплексного подхода подчеркивается аналитическая оценка стратегического развития и современных возможностей ОДКБ. В конце работы отдельной подглавой рассматриваются миротворческие миссии как механизм политики коллективной безопасности, а также изучается масштаб участия Республики Армения в подобных процессах.

Международное право и укрепление международно-правового режима являются важными инструментами защиты внешнеполитических интересов государств и их коллективных объединений. В этой связи для Республики Армения также приоритетной задачей является развитие инструментария правовой дипломатии во внешней политике безопасности. Систематическое и эффективное использование правового инструментария с акцентом на политику коллективной безопасности предоставит возможность продвигать и решать вопросы и проблемы, в рамках международно-правового режима и защищать национальные интересы Республики Армения.

SHIRINYAN MHER ARMO

THE MAIN ISSUES OF COLLECTIVE SECURITY COOPERATION OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE CURRENT PERIOD

Dissertation under 23.00.02 “Political Institutions and Processes,” aspiring to earn Ph.D. in Political Sciences. The defense of the dissertation will take place on May 7, 2026, at 16:00 at the Specialized Council 056 "Political Sciences and International Relations” of the RA MoESCS HESC, operating at Yerevan State University (Address: RA, Yerevan, 0025, 1 Alex Manoogian).

SUMMARY

The geopolitical realities surrounding the Republic of Armenia and the current imperative of regional cooperation require a comprehensive and consistent analysis of national security issues and policies. The purpose of this dissertation is to study the essence of collective security cooperation in the Republic of Armenia, its comprehensive system of confrontation and defense, identify the specifics of the development and implementation of this policy, assess the effectiveness of the conceptual provisions underlying this process, and analyze the strategic combinations of collegiality in Armenia's security policy in the South Caucasus region and beyond within the framework of global and international security.

A comprehensive assessment of current geopolitical and regional developments reveals that the most widespread and practical model of security is the collective (alliance) model, in which member states provide mutual assistance in a coordinated manner, a commitment enshrined in the charter of the respective alliance. The balance of power theory currently applied to the collective security model raises the following questions: under what conditions are alliances formed, what determines who can enter into an alliance with whom, and how is the system of distributing costs and benefits among allies shaped? In this context, the selection and development of an effective collective security format is emphasized within the framework of constitutional reforms expected after the 2026 elections.

The work consists of introduction, three chapters, conclusions and list of references. In the introduction the urgency of the topic, presented a scientific degree of a problem, is the objective and tasks, scientific novelty of the research, both theoretical and practical importance of the work.

In the first chapter of the dissertation, entitled “**Partnership in Collective Security in the Context of International Multilateral Relations**”, the author

comprehensively examined collective partnership as a key mechanism of foreign security policy, as well as the participation of small states in the format of modern international multilateral cooperation.

The second chapter of the dissertation, entitled **"The Origins and Further Development of the Collective Security Model in the Format of the League of Nations and the United Nations**", analyzes the institutional features of the collective security and cooperation model using the examples of the League of Nations and the UN, followed by a comparative assessment of the strengths and weaknesses of the League of Nations and the UN.

In the third chapter, titled "**Integration of the Republic of Armenia into Modern Collective Security Partnership Mechanisms**", the author, using a scientific and analytical approach, examines the Republic of Armenia within the collective-integrative concept of the European Union and examines and evaluates the Republic of Armenia's defense and security partnership with NATO. This chapter, from the perspective of Armenia's security interests, utilizes a comprehensive approach to underscore the analytical assessment of the CSTO's strategic development and current capabilities. Finally, a separate subchapter examines peacekeeping missions as a mechanism of collective security policy and examines the scope of Armenia's participation in such processes.

International law and strengthening the international legal regime are important tools for protecting the foreign policy interests of states and their collective associations. In this regard, the development of legal diplomacy tools in foreign security policy is also a priority for the Republic of Armenia. Systematic and effective use of legal tools, with an emphasis on collective security policy, will provide an opportunity to advance and resolve issues and problems within the framework of the international legal regime and protect the national interests of the Republic of Armenia.